

ՆԱՄԱԿ ԳԻՏԵՄՈՂՆԵՐՈՒ ՄԵՂՔԻՆ

ՄԱՍԻՆ

Եւ ո՛ր կարելի է այս աստիճան խն- լագար մը գրանել, որ չի գիտեր թէ կոյրը գրկուած է արեւի լոյսէն: Եւ եթէ այս մէկը գրկանք է, պէտք է գիտնալ թէ որքա՛ն ատելի մեծ է գրկանքը եւ անսրանելի է կուրութիւնը անոնց, որոնց համար պատուիրաններու լոյսը խաւարած է եւ որոնք կոնակ դարձած են Սուրբ Գրոց ազգարարութիւններուն եւ որոնք չեն կրնար չարը բարիէն զա- նազանել եւ ոչ ալ միապարր մտածում- ներ ունենալ: Ըսելիքս հերեւեալն է. եթէ մէկը երկու թունաւոր օձերու հանդիպի ու խորհելով, որ անոնցմէ մէկը կրնայ թունաւոր ըլլալ՝ փախչի անկէ ու աներկիւղ կերպով երկրորդին մօտենայ, արդեօք երկրորդը սարսա- փելի մահով մը պիտի չմեռցնէ՞ զինք, քանի որ միեւնոյն վնասակար եւ մա- հացու թոյնը ունի: Նոյնն է պարագան անոնց, որոնք պատուիրաններէն մէ- կուն կը հնազանդին եւ երկիւղածու- թեամբ կը պահեն զայն, սակայն կ'անարգեն եւ կ'արհամարհեն անոր նմանող ուրիշ պատուիրան մը, որուն համար չափազանց խղճալի կերպով կորուստի կը մատուցին: Ահաւասիկ, թէ ինչո՞ւ անոնք կորուստի կը մատուցին. մենք սորվեցանք Պօղոսէն, բայց մա- նաւանդ Քրիստոսէն, որ կ'ըսէ. «Գողերը, պոռնիկները, զինեմոլները եւ բամբասողները Աստուծոյ արքայու- թիւնը պիտի չժառանգեն...»

(Ճառեր Յովհան Մանդակունի)

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Գ.- ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ, որ կը մատուցուի ի դէմս Հոգւոյն Սրբոյ:

Արեւնամուտէն ետք, երբ գիշերա- յին խաղաղութիւնը տակաւ կը տարած- ւի երկրի վրայ եւ իր ստուերին տակ կ'առնէ յոգնաբեկ մարմինները, աղա- մորդւոյն խաղաղութեան ներքին գգա- ցումն է, որ կը զարթնու եւ եկեղեցին մասնաւոր արարողութեամբ կը հրաւի- րէ իր զաւակները խաղաղ սրտով ու հոգիով զԱստուած փառաւորելու:

Խաղաղական ժամերգութիւնը կը սկսի հետեւեալ մաղթամբով.- «Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարգացի եւ ի գիշերի առաջի բո»:

Է.- ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ, որ կը կատարուի ի դէմս Հօր Աստուծոյ: Պաշտամունքային օրը աղօթքով ու աշխատանքով յազգեցած իր աւարտին հասած է արդէն ... Շարունակելի

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՈՒԱԶՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak ճրագ թերթ



ԶՈՒ ԽՍՐԵՂ ԽՍ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱՒԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 22 ՕԳՈՍՏՈՍ 2021

ԹԻՒ 34

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Առ. 11.30-12,4: Ձք. 2.10-13: Բ. Կր. 6.16-7.1:
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԼԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 1.39-56

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԼԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 1.39-56

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Չաքարիայի տունը մտնելով՝ Եղիսաբեթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբեթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ, եւ Եղիսաբեթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ. «Կիներուն մէջ օրհնեալ էս դուն եւ օրհնեալ է զաւակը, որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՛նչ երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինձի կ'այցելէ, որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ք թեզի, որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ թեզի ըսուածները պիտի կատարուին»:

Մարիամ ըսաւ. «Տէրը պիտի գովարանեմ: Ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծոյ, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեզութիւնը: Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի, քանի հզօրն Աստուած ինձի համար մեծամեծ գործեր կատարեց: Սուրբ է անունը անոր: Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ մարդոց վրայ: Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ, ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր խորհուրդներով: Գահազրկեց արքաները եւ բարձրացուց խոնարհները: Անօթիները բարիքներով յիացուց, մինչ հարուստները դատարկաձեռն արձակեց: Պաշտպան եղաւ իր ծառային՝ Իսրայէլի, հաւատարիմ մնալով իր ողորմութեան, ինչպէս որ (խոստացած էր մեր հայրերուն՝ Աբրահամի եւ անոր զաւակներուն):

(Մարիամ Եղիսաբեթի մօտ շուրջ երեք ամիս մնալէ ետք վերադարձաւ իր տունը):

Ս. ՅՈՎԱԿԻՄԻ ԵՒ ԱՆՆԱՅԻ

Յովակիմ եւ Աննա, պանծալի եւ գովելի, մարդացեալ հրեշտակներ եւ եւ պարծանք մաղկայիւն ազգին: Անոնք Աստուծոյ կողմէ ընտրուեցան ծնողքը ըլլալու Աստուածորդիին ծնողքին, եւ իրական նախահայրը եւ նախամայրը տիեզերքի Փրկիչին:

Աստուած ուզեց, որ նախ Յովակիմ եւ Աննա անգաւակ մնան՝ որպէսզի ծերութեան եւ ամուսնեան մէջ հրաշագործէ անոնց հրաշալի գաւակ մը՝ սահմանուած իր Միածինը ծնելու:

Յովակիմ եւ Աննա բարեպաշտ, հաւատացեալ եւ միշտ Աստուծոյ ապաւինելով կ'աղօթէին: Օր մը աղօթքի ատեն Աստուծոյ հրեշտակը երեւցաւ Աննային եւ ըսաւ. «Աննա՛, Աննա՛, Աստուած լսեց քու աղօթքդ, եւ ահա պիտի յղանաս եւ պիտի ծնանիս մանուկ մը, եւ անոր անունը պիտի տարածուի համայն երկրի վրայ»:

Աննա ըսաւ. «Կենդանի է իմ Տէր Աստուածս: Եթէ գաւակ մը ծնանիմ, գայն Աստուծոյ պիտի ընծայեմ Սամուէլի մօր՝ Աննային նման եւ իմ գաւակս ալ Աստուծոյ տաճարին պաշտօնեայ պիտի ըլլայ իր կեանքի բոլոր օրերուն»:

Աստուծոյ հրեշտակը անոր ամուսինին քով ալ իջաւ եւ ըսաւ անոր. «Յովակիմ, Աստուած լսեց քու աղօթքդ: Գնա՛ տունդ: Քու կինդ Աննա պիտի յղանայ, եւ ձեզի եւ ամբողջ երկրին ցնծութիւն պիտի ըլլայ»:

Երբ լրացան օրերը, շնորհանունն Աննա ծնաւ իր մանուկը՝ շնորհալի դուստրը եւ անունը կոչեց Մարիամ, որ կը նշանակէ բարձրութիւն, տիրութիւն, լուսապայծառ, աստղ ծովու, եւայլն, որոնք լաւ կը յարմարին մեր տիրամօր:

Երբ մանուկը երեք տարեկան եղաւ, Յովակիմ եւ Աննա առին Մարիամը եւ տարին Տիրոջ տաճարը եւ ընծայեցին Աստուծոյ՝ ըստ իրենց ուխտին, եւ դրին զինք Աստուծոյ պաշտամունքին մէջ՝ ուրիշ կուսաններու հետ, որոնք կը բնակէին տաճարի կուսաստանին մէջ ըստ աւանդութեան, Փանուէլի դուստրին՝ Աննա մարգարէի դաստիարակութեան տակ:

Բայց քանի որ կոյսին տարիքը բաւարար չէր ուրիշներու հետ բնակելու համար, քահանայապետը ծնողքին ըսաւ՝ որ տանին տունը եւ անբծութեամբ պահեն, եւ երբ եօթը տարեկան ըլլայ՝ բերեն եւ դնեն նոյն կուսանոցին մէջ: Եւ այնպէս ըրին:

Այնուհետեւ Մարիամ որպէս հողեղէն Սերովքէ, եօթը տարի եւս ապրեցաւ կուսաններուն հետ եւ ապա, ըստ Աստուծոյ տնօրինութեան, նշանուեցաւ Յովսէփ արդարի հետ եւ տասնհինգ տարեկանին ծնաւ անարատ կուսութեամբ աշխարհի Փրկիչը, Յիսուս՝ որդի Աստուծոյ:

Իսկ Աստուածածինի ծնողքը՝ Յովակիմ եւ Աննա, ինք ծերութեան մէջ կանչուեցան առ Աստուած:

Սովորական կարծիքը այն է, թէ Յովակիմ Աննայէն առաջ վախճանեցաւ, եւ Աննա արժանի եղաւ տեսնելու թող՝ Յիսուս Քրիստոս աստուածորդին մարմնապէս, եւ Փրկչի մանկութեան օրերուն վախճանեցաւ եւ թաղուեցաւ իր ամուսինին գերեզմանը՝ Գեթսեմանիի ձորին մէջ:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ՄԱՐԻԱՄ ՄԱՅՐՆ Է ԲՈՒՈՐԻՆ՝ ԵՐԿՐՆՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ

Երանելի է Աստուածամայրը, որովհետեւ ան մաս կազմեց ամենասուրբ Երրորդութեան Ընտանիքին: Ան եղաւ դուստրը Հայր Աստուծոյ, մայրը Որդի Աստուծոյ եւ Հարսը Սուրբ Հոգի Աստուծոյ: Երանելի է սուրբ Կոյսը, որովհետեւ ան եղաւ մայրը՝ Փրկիչին ու փրկուածներուն, մայրը՝ սրբութեան, սուրբերուն եւ սրբութեան ձգտողներուն, մայրը՝ քերովբէներուն եւ սերովբէներուն, մայրը՝ հրեշտակապետներուն, հրեշտակներուն եւ հրեշտականալ ուզողներուն, մայրը՝ պատմութեան բոլոր արդարներուն եւ նահատակներուն, մայրը՝ մարգարէներուն եւ առաքեալներուն, մայրը՝ Յաղթական եւ Զինուորագրեալ Եկեղեցիներուն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Ան նաեւ մեր մայրն է, եթէ երբեք Քրիստոսով հաշտուած ենք մեր Երկնաւոր Հօր հետ: Մայրն է բոլոր տառապեալներուն, նեղեալներուն, որբերուն եւ որբեւայրիներուն: Եթէ ունիս նեղութիւններ, դիր զանոնք հաւատքով սուրբ Մօրդ ոտքին տակ եւ վստահ եղիր, որ ան պիտի հոգայ:

ԵՐԲ ԱՍՈՒԾՈՅ ՍԵՐԸ ԿԸ ՓՆՏՈՒՄ, ԿԱՐԿ՝ ՍԱՂՄՈՍ 33

Ո՛վ արդարներ, Տիրոջնով ցնծացէք, ուղիղ վարքով ապրողներուն կը վայելէ օրհնութիւն երգել: Քնարով գոհութիւն յայտնեցէք Տիրոջ, տասնալար տալիղով ներքող երգեցէք անոր: Նոր երգ երգեցէք Տիրոջ, քաղցրօրէն ցնծալից հնչեցուցէք ձեր նուագարանները: Որովհետեւ Տիրոջ խօսքը անդառնալի է, անոր բոլոր գործերը վստահելի են: Անկաւար դարութիւնն ու իրաւունքը կը սիրէ, աշխարհը Տիրոջ սիրովը լեցուն է: Տիրոջ խօսքով ստեղծուեցաւ երկինքը, անոր շունչով ստեղծուեցան երկնային բոլոր մարմինները: Բոլոր ծովերը կը մէկտեղէ աւազի պէս, ովկիանոսները՝ ջրամբարներու պէս: Ամբողջ աշխարհը թող Տիրոջմէ վախնայ, թող աշխարհի բնակիչները պատկառին անկէ, որովհետեւ ան ըսաւ՝ եւ աշխարհը գոյացաւ, հրամայեց՝ եւ անկաւ հաստատուեցաւ: Տէրը կը խափանէ ազգերուն խորհուրդները, ձախողութեան կը մատնէ ժողովուրդներուն ծրագիրները, մինչդեռ Տիրոջ խորհուրդը բոլոր ժամանակներուն համար է, անոր ծրագիրները՝ բոլոր սերունդներուն համար: